ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀՏԴ 911.3 (911.3:316)
DOI: 10.56246/18294480-2024.17-03

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Գավառի պետական համալսարանի կենսաբանության,
էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս
էլփոստ՝ avagyan@ysu.am
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԵՊՀ սոցիալ - տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ
էլփոստ՝ anush.hambardzumyan.83@mail.ru

Աշխարհագրության հետազոտության օբյեկտը բնական և հասարակական տարածքային համակարգերն են իրենց որոշակի սահմաններով ու բաղադրիչներով, ներքին կապի դիալեկտիկական միասնությամբ:

Աշխարհագրության հետազոտության օբյեկտը, օժտված լինելով դինամիկությամբ, փոխվում է ժամանակի և տարածության մեջ: Փոխվում են օբյեկտի սահմանները, փոխվում են համակարգ ստեղծող բաղադրիչները, նրանց համակարգաստեղծ կարողությունները, փոխազդեցությունների շրջանակները: Այդ փոփոխությունների շրջանակներում առաջանում են նոր բաղադրիչներ, նախկին բաղադրիչները ստանում են նոր բովանդակություն:

Այս շրջապտույտի համատեքստում, կապված մարդ – բնություն – հասարակություն փոխազդեցությունների փոփոխությունների հետ, առաջանում են օբյեկտների կառուցվածքի ու ներքին բովանդակության նկատմամբ մտածողության նոր ձևեր, համակարգի ստեղծման նոր մոտեցումներ ու նոր սկզբունքներ: Խնդիրը այս փոփոխությունների պատճառահետևանքային կապերի գիտական մեխանիզմի բացահայտման մեջ է: Մեխանիզմ, որի հիմքում նորարարություններն են, տեղեկատվական տեխնոլոգիաները:

Նորարարությունների բազայի վրա ստեղծված աշխարհագրական օբյեկտը կայուն համակարգ է, որտեղ գիտության վերջին նվաճումներն են աշխարհայացքային բարեփոխումները: Գիտականորեն կազմակերպված աշխատանքը ռեսուրսների խնայման, օգտագործման արդյունավետության բարձրացման, շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի բարելավման սոցիալական խնդիրների լուծման գրավականն է:

Աշխարհագրական օբյեկտների նոր մոդելն ունի կիրառական նշանակություն և կարող է օգտագործվել նախապլանային աշխատանքների կատարման ընթացքում:

Բանալի բառեր՝ *փարածականություն, օրինաչափություն, նորարարություն, հասարակություն, աշխարհագրական օբյեկտ, աշխարհայացք, գիտություն:*

Խնդրի դրվածքը: Հասարակության գործունեության ցանկացած ձև պլանավորվում և իրականացվում է տվյալ պահին առկա աշխարհայացքի հենքի վրա:

Աշխարհայացքը այն սկզբունքների, հայացքների ու համոզմունքների ամբողջությունն է, որոնք որոշում են մարդու, սոցիալական խմբի ամբողջության մեջ վերցված հասարակության գործունեության ուղղությունը և վերաբերմունքը իրականության նկատմամբ (1–28):

Իրեն հերթին աշխարհայացքը ձևավորվում է փիլիսոփայական, գիտական, քաղաքական հայեցակարգերի (հայեցակետերի) միջոցով:

Փիլիսոփայական հայեցակարգը մարդ–մարդ, մարդ-հասարակություն, մարդ–բնություն մտածելակերպն է, մտածելակերպ, որում առաջնայինը հոգևոր–հոգեբանական, բարոյական արժեքներն են: Դրանց միջոցով էլ ձևավորվում են մարդ–հասարակություն–բնություն փոխհարաբերությունները, մարդու վերաբերմունքը շրջակա միջավայրի, հողի նկատմամբ:

Մտածողությունը բանականության սկզբունքն է, ինչպես նշում է Իբն Սինան, «Մարդու ամենաբարձր կարողությունը մտածողությունն է» (2-205) մտածողությունը բանականության սկիզբն է, քաղաքակրթվածության մակարդակը: Մտածողությունը և վերաբերմունքը ձևավորվում են որոշակի հասարակական միջավայրում կրթության, դաստիարակության միջոցով:

Դեռևս հին Չինաստանում կոնֆուցիական գաղափարախոսության մեջ մարդը դիտվում է որպես դաստիարակության արդյունք (2–37): Դաստիարակությունը մարդուն հղկում է, կրթում, մոտեցնում մարդկային բանական լուսավորյալ կերպարանքին:

Ըստ Ժ. Օ. Լամետրիի՝ «Պատմական զարգացման գլխավոր պատճառը լուսավորությունն է, լուսավոր անհատների գործողությունները»(2–172):

Կրթվածության և դաստիարակության լուսավորության չափով է մարդը գնահատում իր շրջապատի իրերի և երևույթների բովանդակությունը, ձևավորում նրանց նկատմամբ մտածողությունը, վերաբերմունքը:

Ինչպես Մ. Վեբերն է նշում, «Ամեն տեսակի սոցիալ տնտեսական երևույթների էությունը որոշվում է ոչ միայն նրանց օբյեկտիվ կողմերով, այլև ամենից առաջ այն նշանակությամբ, որը հետազոտողը տալիս է տվյալ պրոցեսին» (1–400):

Վերաբերմունքը անհատի աշխարհայացքն է, սկզբունքների, համոզմունքների, հայացքների ամբողջությունն է: Աշխարհայացքն իրական, հասարակության սեփականությանն է դառնում, եթե ցածր է հասարակության կուլտուրան:

Հասարակությունն է անհատի մտածելակերպի, առաջադեմ գաղափարների կրիչը, հաստատողը, տեսականը գործնականին դարձնողը:

Գործնականը հիմնականում դրսևորվում է սոցիալական դաշտում: Սոցիալապես ապահովված մարդը ակտիվ աշխատող է: Յու. Գ. Սաուշկինը կարևորում է հետևյալ սոցիալական գործոնները. «Լավ կրթությունը, ինտենսիվ հասարակական կյանքը, հաջողված անձնական կյանքը, այդ թվում ընտանեկան կյանքի լավ պայմանները, որոշակի և իրական ազատ ժամանակը, տրանսպորտը, կենցաղային սպասարկումը, բեղմնավոր ստեղծագործական աշխատանքը կապված գիտության համագործակցության կուլտուրայի և արվեստի հետ (3–21):

Սոցիալական գործոնը, հասարակական մտածելակերպը տանում է դեպի կայուն մարդկային զարգացում, կյանքի որակի բարձրացում: Կյանքի որակը կարևոր է նույնացնել մարդու սոցիալական, հոգևոր–հոգեբանական կուլտուրական պահանջմունքների լիարժեք բավարարման հետ (4):

Սոցիալապես ապահովված անհատը պոտենցիալ ստեղծագործող է: Ինչպես նշում է Դ. Հարվեյը, «Գիտական հետազոտությունը ընթանում է որոշակի սոցիալական պայմաններում, արտահայտում է սոցիալական մտքեր և ստանում սոցիալական նշանակությունը» (5):

Այսպիսով, սոցիալական հասարակությունում ավելի իրատեսական և գործնական է դառնում մարդ–հասարակություն մշակույթային հաղորդակցությունը: Մշակույթը դառնում է աշխատանքի կազմակերպման գործոն:

Տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակներում մեծանում է հումանիստական արժեքների դերը: Ինչպես նշում է Ֆրոլովը, «Սոցհումանիտար գործոնը դառնում է արդարության ռեսուրս » (6–19):

Գիտական հայեցակետը (մոտեցումը) փիլիսոփայական տեսական դրույթները տեղափոխում է գործնական տիրույթ: Գործնական մոտեցման պայմաններում հետազոտվող օբյեկտի բովանդակությունը դառնում է ավելի իրատեսական, առարկայական:

Ինչպես նշում են Փոլ Ա. Սամյուելսոնը և Ուիլյամ Դ. Նորդհաուսը, գիտական մոտեցումը՝ «Հայեցակետը, թույլ է տալիս հասկանալ սոցիալ-տնտեսական զարգացման հասարակական կյանքի տարածքային ձևերի կազմակերպման վրա ազդող ուժերի բնույթը» (7-32): Ուժեր, որոնց միջոցով հետազոտվող առանձին տարրեր միավորվում են միմյանց՝ կազմելով մեկ միասնական համակարգ, որը ծավալում է մեկ վերջնանպատակ ունեցող գործունեություն:

Դ. Նարվևի բնորոշմամբ այստեղ գլխավորը տնտեսական գործունեության կարգավորվածությունն է (5-20): Կարգավորվածություն, որի շնորհիվ օբյեկտի տարածքային ձևը դառնում է որոշակի բովանդակություն ունեցող համակարգ գործունեության գիտական մեխանիզմով: Նույն հեղինակի կարծիքով՝ հետազոտության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել՝

- ինչպե՞ս կարելի է խմբավորել և կարգավորել երևույթները,
- ուսումնասիրվող երևույթները ի՞նչ տարածքային կառուցվածք և ձևեր ունեն,
- ինչպե՞ս են առաջացել և զարգացել երևույթները,

- տվյալ երևույթը ինչպե՞ս է կապված և ինչպե՞ս է փոխազդում մյուսների վրա,
- ինչպե՞ս է տվյալ երևույթը ձևավորվում որպես ամբողջություն (7-65):

Այս հարցերի պատասխանը գտնելու համար օգտագործվել են վերլուծություն և համադրություն, համակարգային վերլուծության մոտեցումները և մեթոդները:

Վերլուծության և համադրության ընթացքում՝

- հետազոտվող օբյեկտը բաժանվել է առանձին մասերի,
- տրվել է յուրաքանչյուր մասի գնահատականը,
- այնուհետև ստացված արդյունքների հենքի վրա կատարվել է մասերի հիերարխիկ դասակարգում,
- ընտրվել են վերջնանպատակի համար ավելի կարևոր մասերը՝ մի կողմ թողնելով ոչ էականները:

Համադրության մոտեցումը թույլ է տվել վերլուծության միջոցով առանձնացված մասերը, հատկությունները, հարաբերությունները միավորել՝ կազմելով մեկ միասնական ամբողջություն (1-405):

Ամբողջություն (համակարգ), որի առանձին մասերը՝

- փոխկապակցված են, փոխպայմանավորվում են միմյանցով,
- գտնվում են դիալեկտիկական միասնության մեջ,
- բովանդակային առումով ծառայում են մեկ վերջնական նպատակի:

Համակարգային վերլուծության մոտեցման տիրույթում հետազոտվող օբյեկտը դիտվում է այնպիսի տարրերի որոշակի ամբողջություն, որոնց փոխադարձ կապը պայմանավորում է այդ բազմության ամբողջային հատկությունները: Ընդ որում պարտադիր պայման է համակարգի կապը միջավայրի հետ (1-245):

Միջավայրի, տարածքի հետ կապը հետազոտվող օբյեկտին տալիս է աշխարհագրական բովանդակություն: Իսկ տարածականությունը աշխարհագրական օբյեկտի կարևոր հատկություններից մեկն է:

Է. Բ. Ալանի բնորոշմամբ «Աշխարհագրական հետազոտության հեռանկարային և կառուցողական ուղին հասարակական կյանքի տարածքային կազմակերպման օրինաչափությունների ուսումնասիրություն է» (8):

Աշխարհագրական հետազոտության մոտեցումները ուսումնասիրվող առարկան նախապատրաստում են նախապլանային աշխատանքների համար, առաջարկում են խնդրի լուծման տարբերակներ:

Տնտեսագիտությունն ամենաարդյունավետ տարբերակն է: Ինչպես նշում են Փոլ Ա. Սամյուելսոնը և Ուիլյամ Դ Նորդհաուսը, «Տնտեսագիտությունն ընտրության գիտություն է». ինչպես ընտրել հնարավոր տարբերակներից լավագույնը, սահմանափակ և սուղ արտադրական միջոցներով (աշխատուժ, սարքավորումներ, տեխնիկական գիտելիքներ և այլն) թողարկել ամենատարբեր ապրանքներ և այդ արժեքները ինչպես բաժանել սպառման համար (7-31):

Տնտեսագիտությունն աշխարհագրական հետազոտության օբյեկտին տալիս է առարկայական բնույթ, իրատեսական է դառնում վերջնանպատակը: Վերջնանպատակին հասնելու ճանապարհն անցնում է «Սակավության օրենքի» սկզբունքների և մոտեցումների հենքի վրայով, ըստ որի՝ «Առաջանում է արտադրության հնարավոր սահման հասկացությունը», որ ցույց է տալիս արտադրանքի այն առավելագույն քանակությունը, ինչը կարող է ստանալ տնտեսությունն առկա տեխնոլոգիական գիտելիքների ներդրանքի քանակության պայմաններում (7-54):

Հասարակության տեխնոլոգիական գիտելիքները, ներդրանքի ծավալները, սպառման շուկան անընդհատ փոխվել են, համապատասխանաբար փոխվում են նաև արտադրանքի քանակությունը, որակը, ինքնարժեքը: Խնդիրը այդ փոփոխությունների ընթացքի կանխատեսումն է և ոլորտի ապագայի պլանավորումը: Խնդրի լուծմանը հասնելու համար Թ. Հեգերստրանդը և Լ. Սուարես-Վիլլան, տնտեսական աշխարհագրության օբյեկտը քննարկելով ժամանակի և տարածության մեջ, նրա հիմքում դնում են նորարարությունների (նորարարությունների դիֆուզիայի) տեսությունը (9):

Ըստ նորարարությունների տեսության՝ սոցիալ–տնտեսական զարգացումները, տարածքային տեղաշարժերը կատարվում են նորարարությունների շնորհիվ: Արտադրողական ուժերը գնում են այնտեղ, որտեղ բարձր տեխնոլոգիաներն են, գիտական առաջատար միտքը:

Նորարարությունը հենված է հասարակության քաղաքակրթվածության, տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման վրա (մանրամասն տե՛ս գծագիր 1-ում):



Ա-Գ-քաղաքակրթվածության մակարդակը
Ա-Բ-տեղեկատվության տիրապետման չափը
Ա-Դ զարգացման աստիճանը

Գծագիր 1.

Հասարակության քաղաքակրթվածության մակարդակը նրա զարգացման պատմու-թյունն է, մշակույթը, որն ունի կազմակերպչական բնույթ:

Տեղեկատվության տնտեսական զարգացման կապը մանրամասն քննարկվել է Մ. Կաստելսի (10), Տ. Պ. Նիկոլաևայի (11), Ի. Ա. Ստրելեցի (12), Գ. Ի. Ղուկասյանի (13) և ուրիշների կողմից: Մ. Կաստելսն տեղեկատվությունը համարում է արտադրողականության բարձրացման մրցադիմացկանության ամրապնդման գործոն (լինի դա ընկերություն, ռեգիոն, թե ազգ): Այստեղ խնդիրը տեղեկատվության հավաքման, մշակման և արդյունավետ օգտագործման մեջ է (10):

Ըստ Նիկոլաևայի՝ տեղեկատվական տնտեսության մեջ որպես արտադրողական ռեսուրս հանդես է գալիս գիտակցված աշխատանքը (11):

Գիտականորեն կազմակերպված աշխատանքը ռեսուրսների խնայման, օգտագործման արդյունավետության բարձրացման, շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի բարելավման սոցիալական խնդիրների լուծման գրավականն է:

Գիտակցված աշխատանքային գործունեության ծավալը տարածքային առումով անսահման չէ: Որովհետև անսահման չեն ռեսուրսները, անսահման չեն պետության ունեցած հնարավորությունները, անսահման են երբեմն իրականությունից դուրս հասարակության և մարդկանց պահանջմունքները, ցանկությունները:

Խնդիրը այս ամենի միավորումով ներդաշնակ համակարգ ստեղծելն է: Իսկ համակարգի (աշխարհագրական օբյեկտի) գործունեությունը որոշակի տարածքի (ռեգիոնի) մեջ սահմանափակելն է:

Ռեգիոնը պետության սոցիալ-տնտեսական ռազմավարական քաղաքականության իրագործման վայրն է, տարածքային պլանավորման դաշտը:

Ռեգիոնալ համակարգում բնառեսուրսային աշխատանքային բոլոր կարողությունները, ենթակառուցվածքները ծառայում են հասարակության շահերին, ենթարկվում կայուն զարգացման գաղափարին:

Եզրակացություն

- Աշխարհահայացքը գիտականության աստիճանն է, որը որոշում է թե ինչ հարցեր և ինչպես կարող է լուծել գիտությունը:
- Աշխարհահայացքը, գիտական հայեցակարգը դեպի նորարարություններ տանող, տեղեկատվական կարողությունները օգտագործող միջոց է:
- Տեղեկատվական դաշտում նորարարական սկզբունքներով ու մոտեցումներով աշխատող աշխարհագրությունը հասարակական կյանքի կայուն ռեգիոնալ ձևերի (համակարգերի) մշակող գիտություն է, ինչպես նաև կայուն զարգացման ռազմավարությունը մշակող:
- Աշխարհագրական հետազոտությունները թույլ են տալիս ռեգիոնները ապահովել զարգացման գիտականորեն հիմնավորված ծրագրերով և պլաններով:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Փիլիսոփայության բառարան» Երևան,1975, էջ 28, 404, 405, 245:
2. Философский словарь, с. 205,37,170,400.
3. Саушкин Ю. Г., Аспекты Советской социальной географии и В. В.: кн. Экономическая и социальная география. Вопросы географии, № 115, М.,1980, с.21.
4. Ավագյան Ա. Ռ., Ընդերքի ռեսուրսների աշխարհագրություն, Երևան, 2000, էջ 13:

5. Харвей Д., Научное объяснение в географии, М., 1974, с.215, 20.
6. Фролов И. Т., О человеке и гуманизме, М.,1989, с.19, 20
7. Փոլ Ա. Սամուելսոն, Ուիլյամ Դ. Նորդհաուս, Տնտեսագիտություն 1, Մակրո տնտեսագիտություն, «Ապոլոն», Երևան, 1995, էջ 31, 35 , 54, 61, 65:
8. Алаев Э. Б., Социально экономическая география // Понятийно - терминологический словарь, М.1983 г., стр.33.
9. Suares Villa Regional evolution and the srece exonomy Entrepreneusis-hip.. and Reg. Dev._1991w 3,4,-p 335-347
10. Кастель С. М., Информационная эпоха, экономика, общество и культура // Пер. с англ. под научн. ред. О. И. Шкаратина, ГУ ВНГЭ, 2000, с.81
11. Николаева Т. П., Основы информационной экономики, СПб. ООО и Лекс Стар, 2001, с.6-7.
12. Стрелец М. А., Новая экономика и информационные технологии, Москва 2003, с. 119-220.
13. Гукасьян Г. М., Экономическая теория, проблемы новой экономики, изд. 2-е, СПб.Питер, 2003 г.
14. Родомен Б. Б., Позиционные принципы и давление места // Вестник МГУ, Геогр. 1979, №4, с. 14-40

ANALYSIS OF THE OBJECT OF GEOGRAPHICAL RESEARCH

AVAGYAN ARAMAYIS
Doctor of Geographical Sciences, Full Professor,
Lecturer at the Biology Ecology and Healthy Lifestyle Chair,
Gavar State University
email: avagyan@ysu.am
HAMBARDZUMYAN ANUSH
Post-graduate student of Socio-Economic Geography Chair,
Yerevan State University
email: anush.hambardzumyan.83@mail.ru

The object of geographical research is a natural and social territorial system with its defined boundaries, components, and the dialectical unity of internal connection. The object of geographical research, endowed with dynamism, changes in time and space. The object's boundaries, as well as the components that create the system, their system-forming abilities, and the scale of interactions are changing. As part of these changes, new components appear, and previous components receive new content.

In the context of this cycle, associated with changes in the interaction of the mankind, nature and society, new directions of thinking about the structure and internal content of objects, new approaches to creating a system, and new principles arise. The problem lies in explaining the scientific mechanism of the causal relationships of these changes. The mechanism is based on novelties and information technology. A geographical object created on an innovation base is a stable system in which the latest achievements of science are ideological reforms. Scientifically organized work is a key to saving resources, increasing the efficiency of their use, improving the ecological condition of the environment, and solving social problems.

New models of geographical objects are of applied importance and can be used when performing pre-planned work.

Keywords *spatiality, regularity, innovation, society, geographical object, worldview, science*

АНАЛИЗ ОБЪЕКТА ГЕОГРАФИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ

АВАГЯН АРАМАИС
Доктор географических наук, профессор биологии ГГУ
Преподаватель кафедры экологии и здорового образа жизни
электронная почта: avagyan@ysu.am
АМБАРЦУМЯН АНУШ
Аспирант кафедры социально-экономической географии ЕГУ
электронная почта: anush.hambardzumyan.83@mail.ru

Объектом географического исследования являются естественные и общественные территориальные системы с их определёнными границами, компонентами, диалектическим единством внутренней связи. Наделённый динамизмом, объект географиического исследования, изменяется во времени и пространстве.

Изменяются границы объекта, меняются системообразующие возможности, сфера взаимодействий. В рамках этих изменений появляются новые компоненты, прежние компоненты получают новое содержание. В контексте этого цикла возникают новые формы мышления о структуре и внутреннем содержании объектов, новые подходы к созданию систем, новые принципы в связи с изменениями во взаимодействиях человека, природы и общества. Проблема заключается в объяснении научного механизма причинно-следственных связей этих изменений. Географический объект, созданный на основе инноваций, представляет собой устойчивую систему, в которой последними достижениями науки являются мировоззренческие реформы.

Географический объект, созданный на основе инноваций, представляет собой устойчивую систему, в которой последние достижения науки - это мировоззренческие реформы. Научно организованный труд является залогом экономии ресурсов, повышения эффективности их использования, улучшения экологического состояния окружающей среды, решения социальных проблем.

Новые представления о географических объектах имеют практическое значение и могут быть использованы при выполнении предпланировочных работ.

Ключевые слова *пространственность, закономерность, инновация, общество, географический объект, мировоззрение, наука.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.09.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 18.09.2024թ.:
Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: